

Արագացնել ԱԱՀ փոխհատուցման գործընթացը և մեծացնել կեղծ փաստաթղթերի հիման վրա նրա հետքերման ռիսկը, թե՞ առավել հանգամանալից վերլուծել յուրաքանչյուր դեպք, որի արդյունքում երկարացվում է համապատասխան պահանջների ուսումնասիրման ժամկետը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՏԻԿՑԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի բանկային համակարգ այդ երկրի տնտեսության զարգացման գործում ունի առաջնային նշանակություն: Մասնավորապես կարևոր դեր են խաղում առևտրային բանկերը, որոնք բանկային համակարգի կարևոր բաղադրիչն են: Սա պայմանավորված է նրանով, որ բանկը դրամաշրջանառության ոլորտի հիմնական կառուցվածքային միավորն է:

Գոյություն ունեն բանկի էությունը բնութագրող տարբեր սահմանումներ, որոնք ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմյանց, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմելու վերջինիս վերաբերյալ:

Բանկը ֆինանսավարկային ձեռնարկություն է, որը ավանդների տեսքով կենտրոնացնում է ժամանակավոր ազատ դրամական միջոցները, տրամադրում է դրանք ժամանակավոր օգտագործման վարկի տեսքով, հանդես է գալիս որպես միջնորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխադարձ վճարահաշվարկային գործառնությունների ժամանակ, կարգավորում է դրամաշրջանառությունը երկրում, այդ թվում նաև նոր փողերի էմիսիան¹:

Բանկը անկախ առևտրային կազմակերպություն է, որը, ինչպես և ցանկացած ձեռնարկություն, ունի իր արտադրանքը: Բանկի արտադրանքը նախևառաջ վճարամիջոցների ձևավորումն է, ինչպես նաև վարկերի, երաշխիքների, տարատեսակ ծառայությունների մատուցումը:

Իսկ շուկայական էկոնոմիկայի պայմաններում բանկը ազգային տնտեսությունը լրացուցիչ դրամական ռեսուրսներով ապահովող գլխավոր գործառնական գործիքն է: Այն վերաբաշխում է դրամական ռեսուրսները դրանց ավելցուկային ոլորտներից դեպի դեֆիցիտային ոլորտներ, միջնորդ է վարկատուների և վարկառուների, վաճառողների և գնորդների միջև դրամական միջոցների շարժի ժամանակ: Բանկը գործում է փոխանակման ոլորտում. «գնում» և «վաճառում» է ռեսուրսները՝ նպաստելով ապրանքների փոխանակմանը:

Ժամանակակից բանկերը ոչ միայն իրականացնում են փողի առք և վաճառք, այլ նաև շուկայի վերլուծաբաններ են: Իրենց զբաղեցրած դիրքով նրանք ավելի մոտ են գործարարությանը, դրա պահանջմունքներին և փոփոխվող կառուցվածքին: Մրանով իսկ տնտեսության կարգավորման գործում բանկը դառնում է գլխավոր, հիմնարար օղակներից մեկը:

Բանկերը, ընդլայնելով կապիտալի կուտակման բազան, կենտրոնացնում են ինչպես խոշոր, այնպես էլ մանր խնայողությունները և ներդրումային ու վարկային համակարգերի միջոցով ներդնում ստացված միջոցները տնտեսության զարգացման գործում:

Առանձնահատուկ ֆինանսական միջնորդ լինելու պարագայում բանկն իր հաճախորդների համար կարող է հանդես գալ նաև որպես գործակալ՝ կատարել վճարումներ երրորդ անձանց համար, ընդունել և վճարել չեկեր, գներ, վաճառել և փոխանակել արտարժույթ և ար-

¹ Экономика, К.Р.Макконнелл, С.Л.Брю, 14-е издание, 2003, стр.294-295.

ծեթոթեր, հսկել դրամական միջոցների շարժը, դրամի և արժեթղթերի շրջանառությունը, իրականացնել անկանխիկ հաշվարկներ, մատուցել վճարահաշվարկային ծառայություններ:

Չնայած մատուցվող ծառայությունների լայն շրջանակին, այդուհանդերձ, բանկերի նշանակությունը նախևառաջ պայմանավորված է նրանով, որ բանկերը կարող են.

- ձևավորել վճարային միջոցներ. բանկերը նոր փող են ստեղծում վարկի տեսքով,
 - վճարամիջոցները դնել շրջանառության մեջ. հաճախորդներին վարկերի տրամադրումը,
 - վճարամիջոցները դուրս բերել շրջանառությունից. փոխառուների կողմից վարկի մարումը:
- Այսպիսով, բանկերը վարկավորում են տնտեսությունը՝ կարգավորելով նրա զարգացումը:

Վարկային համակարգի կարևոր բաղկացուցիչն են առևտրային բանկերը: Առևտրային բանկերը շուկայական տնտեսության մեջ կատարում են յուրահատուկ դեր, ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնցով և տարբերվում են այլ ֆինանսական միջնորդներից և կազմակերպություններից: Բանկերի դերը տնտեսության մեջ առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ դրանք ֆինանսական միջնորդներ են, որոնք ներգրավում են միջոցներ և դրանք փոխատվության տրամադրում ընկերություններին՝ նրանց ընթացիկ ծախսերը ծածկելու համար: Բացի բանկերից, ֆինանսական միջնորդներ են նաև ապահովագրական ընկերությունները, վարկային միությունները, կենսաթոշակային, ինվեստիցիոն հիմնադրամները, բրոքերային և դիլերային ընկերությունները և ֆինանսական ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններ: Այսպիսով, ֆինանսական միջնորդները ներգրավում են բնակչության խնայողությունները և դրանց հաշվին փոխատվություն տրամադրում կազմակերպություններին, որոնք այդ միջոցները օգտագործում են ներդրումային նպատակներով:

Առևտրային բանկերը, որպես առանձնահատուկ ֆինանսական միջնորդներ, ունեն հետևյալ բնորոշ հատկանիշները.

1. բանկերի ռեսուրսները ձևավորվում են գլխավորապես ներգրավված միջոցների հաշվին: Բավական է նշել, որ բանկերի սեփական կապիտալը հաճախ չի գերազանցում ընդհանուր պասիվների 10%-ը, ինչը կախվածության մեջ է դնում նրանց ներքին և արտաքին գործոններից: Այդ պատճառով էլ բանկի անվճարումակության ռիսկը փոքրացնելու նպատակով իրավասու պետական մարմինները սահմանում են կապիտալի համարժեքության նորմատիվներ, որոնցով բանկի կողմից միջոցների ներգրավման ծավալներն անուղղակիորեն կախվածության մեջ են դրվում նրա սեփական կապիտալի մեծությունից:

2. Բանկային ավանդներ ներգրավելու, բանկային հաշիվներ բացելու և սպասարկելու, անկանխիկ վճարամիջոցներ՝ այսպես կոչված «բանկային փողեր» թողարկելու բացառիկ, մենաշնորհային իրավունքը: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ բանկերը կարող են միջոցներ ներգրավել բանկային ավանդների ձևով, ինչպես նաև բացել և վարել բանկային հաշիվներ¹: Մրա հիման վրա նրանք ապահովում են վճարային համակարգի գործունեությունը՝ վճարումների ժամանակ հանդես գալով որպես միջնորդ: Բանի որ ժամանակակից տնտեսության մեջ անկանխիկ փողը վճարման հիմնական միջոցն է, ինչպես նաև փողի նառաջարկի կարևորագույն բաղադրիչը, առևտրային բանկերը կարևոր դեր են խանդում երկրի վճարային համակարգի կայունության ապահովման և դրամավարկային քաղաքականության իրագործման բնագավառում՝ վերջինիս ազդակները հաղորդելով տնտեսությանը: Մրանով է պայմանավորված նաև պետական մարմինների կողմից բանկերի գործունեության կարգավորման հատուկ համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

Առևտրային բանկերի կարևորագույն գործառնություններից մեկը վարկերի տրամադրումն է, որը բանկերն իրականացնում են ձեռնարկություններից և անհատ անձանցից ներգրավված ազատ դրամական միջոցների վերաբաշխման միջոցով: Վերաբաշխվող միջոցների գինը որոշվում է փոխառու միջոցների առաջարկով և պահանջարկով: Արդյունքում ապահովվում է տնտե-

¹ ՀՀ ԿԲ տեղեկագիր 2007:

սությունում ֆինանսական միջոցների ազատ հոսքը, ինչն էլ համապատասխանում է շուկայական հարաբերություններին:

Աղյուսակ 1

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարված ընդհանուր վարկային ներդրումների փոփոխության դինամիկան 30.12.07թ. դրությամբ (հազ.դրամ)¹

	Վարկային ներդրումներ				
	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Առևտրային բանկեր	124 912 560	151 325 901	201 775 969	247 078 051	427 154 909
Վարկային կազմակերպություններ	2 387 763	3 311 793	6 051 490	16 495 676	38 240 269
Ընդամենը վարկային ներդրումներ	127 300 323	154 637 694	207 827 459	263 573 727	465 395 178

ՀՀ բանկային համակարգի ակտիվները 2007թ. ընթացքում աճել են 44%-ով, իսկ 2003թ. համեմատ մոտ 3 անգամ՝ կազմելով 784.1 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների և արժեթղթերում կատարված ներդրումների աճով:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 2007թ. ընթացքում վարկային ներդրումները՝ աճել են 72.87%-ով, իսկ 2003թ. դրությամբ ավելի քան 3 անգամ: Վարկային ներդրումների ծավալը 30.12.2007թ. դրությամբ աճել է մինչև 427.2 մլրդ դրամ՝ կազմելով բանկային համակարգի ակտիվների 54.5%-ը:

Ուշագրավ է, որ տնտեսության վարկավորմանը բաժին է ընկել ընդհանուր վարկային ներդրումների 48.8%-ը կամ 208.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշը 2007թ. աճել է 57.6%-ով, իսկ 2003թ. համեմատ 187.9%-ով:

Չնայած վերջին տարիների տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերին, այնուամենայնիվ ընդհանուր վարկավորման ծավալը դեռևս փոքր է և չի տարածվում տնտեսության բոլոր ճյուղերի վրա: 2007թ. ընթացքում առևտրային բանկերի կողմից վարկավորման ծավալի ամենամեծ աճը գրանցվել է շինարարության ոլորտում՝ 91% (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումների կառուցվածքը²

Տնտեսության ոլորտներ	Վարկային ներդրումները 2007թ. (մլրդ ՀՀ դրամ)	Վարկային ներդրումների տեսակարար կշիռը ըստ տնտեսության ոլորտների
Արդյունաբերություն	56,364	15.09%
Շինարարություն	22,356	5.99%
Առևտուր	86,925	23.28%
Ֆինանսական հատված	7,808	2.09%
Գյուղատնտեսություն	22,417	6.00%
Տրանսպորտ և կապ	5,856	1.57%
Ծառայության ոլորտ	19,977.5	5.35%
Սպառողական վարկեր	12,8 374.5	34.38%
Այլ ճյուղեր	23,332.5	6.25%

¹ www.banks.am.

² www.armstat.am.

Ֆինանսական միջնորդությունը դեռևս փոքր է և լիարժեք չի իրականացնում աճող ներքին խնայողությունները ներդրումների փոխարկելու իր հիմնական առաքելությունը՝ չնայած տնտեսական աճի նկատմամբ վերջին տարիների բանկային համակարգի առաջանցիկ աճին (2007 թվականին բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման ծավալը համախառն ներքին արդյունքի նկատմամբ կազմել է 13%՝ 2003 թվականի 6.6% տոկոսի համեմատությամբ)։ Հետևաբար, կառավարությունը նպատակ է դնում կրկնապատկելու ֆինանսական միջնորդությունը՝ Հայաստանի ամբողջ տարածքում բնակչության և գործարարների համար ֆինանսական գործիքների (վարկեր, ապահովագրություն, կորպորատիվ արժեթղթեր և այլն) հասանելիության և բազմազանության ընդլայնմամբ։

Կառավարությունն աջակցելու է ֆինանսական համակարգի արագ ընդլայնմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ռազմավարությանը, այդ թվում՝ հիփոթեքային և սպառողական վարկերի ավելացմանը, ֆինանսական ռեսուրսների մատչելիության և բանկերի հուսալիության աստիճանի բարձրացմանը, համապատասխան ինստիտուտների ընդլայնմանն ու զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի շուկայում հեղինակավոր օտարերկրյա բանկերի հետագա ներգրավմանը¹։

Տնտեսության զարգացման գործում բանկերի միջնորդական գործունեության դերն այն է, որ բանկերը իրենց գործունեությամբ նվազեցնում են ռիսկը և անորոշությունը տնտեսական համակարգում։ Դրամական միջոցները կարող են վարկատուից անցնել փոխառուին՝ առանց բանկի միջնորդության, սակայն այս դեպքում կտրուկ աճում է վարկ տրված դրամական միջոցները կորցնելու ռիսկը, և աճում են դրանց տեղաբաշխման ընդհանուր ծախսերը, քանի որ վարկատուն և փոխառուն տեղյակ չեն միմյանց վճարունակության մասին, իսկ առաջարկվող դրամական միջոցների գումարային մեծությունը և ժամկետները չեն համապատասխանում պահանջվող միջոցների մեծությանն ու ժամկետներին։ Մինչդեռ ֆինանսական կապիտալի մատակարարների և օգտագործողների միջև բանկերի միջնորդությունը վերացնում է ուղղակի ֆինանսավորման ճանապարհին կանգնած բոլոր պատնեշները։ Բանկերը ներգրավում են տարբեր չափերով և ժամկետներով ավանդներ, դրամական այլ միջոցներ, այդ իսկ պատճառով էլ կարող են վարկեր տրամադրել տարբեր հաճախորդներին անհրաժեշտ չափով ու ժամկետներով և իրենց ակտիվների լայն դիվերսիֆիկացման հիման վրա նվազեցնել ավանդատուների ռիսկերը։ Բացի այդ, մասնագիտանալով վարկային գործառնություններում, բանկերն ունեն վարկառուների վարկունակությունը ճիշտ գնահատելու ավելի մեծ հնարավորություն։

Բանկերի կարևորագույն գործառնություններից է տնտեսությունում խնայողությունների խրախուսումը։ Տնտեսության կառուցվածքային վերափոխումը պետք է հիմնված լինի նախևառաջ ներքին խնայողությունների վրա, այլ ոչ թե արտասահմանյան ներդրումների։ Մինչդեռ նախկինում տնտեսության զարգացումը չէր խթանում արտադրողների, տնտեսավարող այլ սուբյեկտների և բնակչության կողմից ռեսուրսների խնայողությունն ու կուտակումը։ Ձեռնարկություններում եկամուտների օգտագործումն ու միջոցների խնայողությունն իրականացվում էին դիրեկտիվ պլանավորման միջոցով։ Եկամուտների ցածր մակարդակի պայմաններում բնակչությունն ավելի քիչ է հակված խնայողություններ կատարելու, իսկ սպառողական շուկայի հավասարակշռության խախտումը նվազագույնի է հասցնում խնայողությունների մակարդակը։

Շուկայական տնտեսության պայմաններում իրավիճակն այլ է։ Բանկերը, ֆինանսական շուկայում վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկ ցուցաբերելով, պարտավոր են ոչ միայն առավելագույն կենտրոնացնել տնտեսության խնայողությունները, այլ նաև ձևավորել համապատասխան խթաններ խնայողությունների համար։ Խնայողության շարժառիթները ձևավորվում են բանկերի կողմից միջոցների ներգրավման ճկուն քաղաքականությամբ։ Բացի

¹ www.gov.am.

տոկոսադրույքների մեծությունից՝ բանկում գումարներ ներդրողներին անհրաժեշտ են հուսալիության երաշխիքներ: Այդպիսի երաշխիք է ավանդների պարտադիր երաշխավորման ինստիտուտը: Բացի ավանդների ապահովագրությունից՝ հաճախորդներին կարող են հետաքրքրել նաև բանկի ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները, ինչն էլ նրանց հնարավորություն է տալիս ինքնուրույն գնահատելու ներդրումների ռիսկայնության աստիճանը:

Բանկերի խնդիրն է ստեղծել միջոցների ներգրավման այնպիսի ձևեր, որոնք իսկապես կշահագրգռեն հաճախորդներին խնայողություններ կատարելու, և դա կվերածվի սովորության, որը որոշիչ գործոն է շուկայական օրենքներով զարգացող տնտեսության ներդրումային հնարավորությունների համար:

Ֆոնդային շուկայի ձևավորմամբ պայմանավորված՝ զարգացում է ապրում բանկերի այնպիսի գործառույթ, ինչպիսին է արժեթղթերով գործառնություններում միջնորդությունը: Ի տարբերություն մի շարք զարգացած երկրների՝ ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը արժեթղթերի շուկայում չի սահմանափակվում: Նրանք կարող են իրականացնել տարատեսակ գործարքներ արժեթղթերով: Բանկը, ունենալով ԿԲ բանկային գործառնություններ կատարելու լիցենզիա, իրավունք ունի իրականացնել արժեթղթեր թողարկելու, գնելու, վաճառելու, հաշվառելու, պահպանելու և այլ գործարքներ, որոնք իրականացնում են վճարային փաստաթղթերի գործառույթ: Բանկն իրավունք ունի իրականացնելու արժեթղթերի հավատարմագրային կառավարում՝ համաձայն իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքած պայմանագրի: Բանկն իր հաճախորդներին մատուցում է արժեթղթերի թողարկման և շրջանառության վերաբերյալ խորհրդատվություն:

Այսպիսով, բանկերը և վարկային կազմակերպություններն ունեն իրենց առանձնահատուկ տեղը տնտեսության մեջ, որպես ֆինանսական շուկայի հիմնական օղակ՝ կատարում են այդ ոլորտի աշխատանքների մեծ մասը, որոշում դրա առանձնահատկությունները և ընդհանուր մակարդակը:

Զարգացմանը զուգընթաց տնտեսությունը նորանոր խնդիրներ է դնում բանկային համակարգի առջև, աճում են առևտրային բանկերի կողմից մատուցվող ծառայությունների և իրականացվող գործառնությունների ծավալները, ընդլայնվում է դրանց տեսականին: Սրա հետևանքով առաջ է գալիս առևտրային բանկերի մասնագիտացման անհրաժեշտությունը, որը դրսևորվում է երկակի: Մի կողմից՝ բանկերը մասնագիտանում են այս կամ այն ոլորտում, մյուս կողմից՝ բանկային տիպի գործառնությունների թվից կամ տնտեսության զարգացմանը զուգընթաց ձևավորվող նոր տեսակի գործառնությունների հիման վրա ստեղծվում են նեղ մասնագիտացված կազմակերպություններ, որոնք իրականացնում են սահմանափակ բանկային գործառնություններ: Այսպիսով, առանձին բանկային գործառնությունների համախմբումը, որը դրսևորվեց պատմական երկարատև ժամանակահատվածում և հանգեցրեց բանկերի ձևավորմանը, կերպարանափոխվում է և տեղիք տալիս ապակենտրոնացման միտումներին, բանկային համակարգում մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունների ստեղծմանը և գործունեությանը: Այս գործընթացը, որի սկզբնական փուլերում է դեռևս գտնվում ՀՀ բանկային համակարգը, զարգանում է շարունակական միտումներով և դրսևորումներով, որոնց բուն իմաստը մասնագիտացման միջոցով առկա ռիսկերի նվազեցումն է, բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումը: